

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՐՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ «ԸՆՏԱՆԻՔ ԵՎ ՀԱՄԱՅՆՔ»
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴԿՈՐ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
«ԴՏՊ-11414-11018/23ԸՀԱՐՄ»

Քաղ. Երևան

«1» փետրվարի 2023 թ.

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն), ի դեմս գլխավոր քարտուղար Սամվել Մուրադյանի (այսուհետ՝ պատվիրատու), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Ընտանիք և համայնք» բարեգործական հասարակական կազմակերպության, ի դեմս նախագահ Քնարիկ Գարանֆիլյանի (այսուհետ՝ կատարող), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 2111-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), «1141. «Ընտանիքներին՝ կանանց և երեխաներին աջակցություն» ծրագրի «11018. Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում» միջոցառման (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և գինը

1.1. Սույն պայմանագրով նախարարությունը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով պայմանագրի 5.1.-ին կետով սահմանված կարգով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված՝ գումարից մինչև 20, 963, 200 (քսան միլիոն ինը հարյուր վաթսուներեք հազար երկու հարյուր) ՀՀ դրամ, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են պայմանագրի N 1 հավելվածում: Ծրագիրն իրականացվում է Արմավիրի մարզում՝ կյանքի դժվարին՝ իրավիճակում հայտնված ամսական 145 երեխայի համար (ամսական):

1.3. Պայմանագրի գինը կարող է փոփոխվել երկկողմ համաձայնությամբ, եթե հաշվետու ժամանակահատվածում (եռամսյակում) պայմանագրում նշված արդյունքային բոլոր ցուցանիշների կատարողականի միջինացված ամփոփ գնահատականը չի կատարվել նվազագույնը 80 %-ով կամ չի ապահովվել շահառուների պլանային թվի նվազագույնը 75 %-ը՝ պայմանագրի 9.7.-րդ կետի համաձայն նոր համաձայնագիր կնքելու միջոցով:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Նախարարությունն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել պայմանագրի 6.2.-րդ կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ՝ պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. պայմանագիրն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը նախարարության կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. նախարարության կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները.

2.2.3. նախարարության համաձայնությունը ստանալու դեպքում՝ կատարել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից տրամադրվող ֆինանսական միջոցների հոգվածային վերաբաշխում՝ բայց ոչ ավելի, քան պայմանագրի N 6 հավելվածով սահմանված ֆինանսական նախահաշվի ծախսային յուրաքանչյուր հոգվածի 10%-ի չափով:

2.3. Նախարարությունը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել պայմանագրի 4.2.-րդ կետում նշված ժամկետում:

Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում նախարարության կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. պայմանագրով սահմանված կարգով մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 10-ը, իսկ դեկտեմբեր ամսվա համար՝ մինչև դեկտեմբերի 20-ը, նախարարությանը ներկայացնել հանձնման-ընդունման ակտը՝ համաձայն պայմանագրի N 5 հավելվածի, և հաշվետվությունները՝ համաձայն պայմանագրի N 3 հավելվածի, ինչպես նաև միջոցառումների իրականացման մասին եռամսյակային հաշվետվություններ՝ մինչև հաշվետու ժամանակահատվածի հաջորդող ամսվա 10-ը, իսկ չորրորդ եռամսյակի համար՝ մինչև դեկտեմբերի 20-ը, և տարեկան հաշվետվություն՝ ծրագրի ավարտից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, եռամսյակային և տարեկան հաշվետվությունները՝ համաձայն N 2 հավելվածի և N 7 հավելվածում նշված ձևաչափի.

2.4.5. պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու նախարարության հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. նախարարության կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ նախարարության կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. պայմանագրով սահմանված միջոցառումների տարեկան արդյունքները թերակատարելու դեպքում, դրա արդյունքում առաջացած գումարները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ մինչև տվյալ բյուջետային տարվա նախավերջին աշխատանքային օրը.

2.4.8. պայմանագրի 4.1-ին կետով սահմանված հանձնման-ընդունման ակտի հետ միաժամանակ Նախարարություն ներկայացնել կատարված փաստացի ծախսերի վերաբերյալ Հայաստանի



Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի փետրվարի 9-ի N 5-Ն հրամանով սահմանված տնտեսագիտական դասակարգման սինթետիկ հաշվառմամբ հաշվետվությունը՝ համաձայն պայմանագրի N 3 հավելվածի: «Հաշվետվությանը կից անհրաժեշտ է ներկայացնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից փոխհատուցման ենթակա գումարների մասով կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթեր, ինչպես օրինակ՝ հաշիվ ապրանքագրեր, վճարման հանձնարարականներ, աշխատաժամանակի հաշվարկի թերթիկ, աշխատավարձի հաշվարկի կամ վճարման տեղեկագրեր, ճանապարհաձախսերի փոխհատուցման թերթիկ և այլն»:

2.4.9. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. Մոնիթորինգը (ըստ պահանջի)

3.1. Նախարարությունն ըստ պահանջի ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Նախարարության և (կամ) նրա կողմից լիազորված կազմակերպության կամ անձի կողմից բացառապես նախօրոք մշակված հարցաթերթի միջոցով և (կամ) ըստ անհրաժեշտության՝ առանց հարցաթերթի:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ և առաջարկություններ:

3.4. Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է կատարվող գործողությունների շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով գործողություններին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր, ինչպես նաև կապ հաստատելով ծրագրի շահառուների հետ՝ նրանց շրջանում հարցում և եզրակացություն տալու նպատակով՝ առանց կազմակերպությանը տեղեկացնելու կամ ներգրավելու այս գործընթացում:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

3.6. Եռամսյակային հաշվետվությունների ներկայացված և համապատասխան հիմնավորող փաստաթղթերի հիման վրա բոլոր արդյունքային ցուցանիշների կատարողականը գնահատվում է համապատասխան վարչության կողմից՝ ըստ անհրաժեշտության ամփոփ վերլուծությունների և մոնիթորինգի վարչության հետ համատեղ:

4. Պայմանագրի արդյունքի հանձնման և ընդունման կարգը

4.1. Պայմանագրի արդյունքն ընդունվում է նախարարության և կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ:

Մինչև պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման համար նախատեսված օրը ներառյալ կազմակերպությունը էլեկտրոնային համակարգի միջոցով նախարարությանն է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը (N 5 հավելված) և հաշվետվությունը: Ընդ որում կազմակերպությունը հանձնման-ընդունման ակտը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն պլանակները, որոնք վերաբերում են իր տվյալներին:

4.2. Եթե իրականացված միջոցառումը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, նախարարությունը պայմանագրի 4.1.-ին կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4.3. Եթե իրականացված միջոցառումը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա նախարարությունը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և պայմանագրի 4.2.-րդ կետում նշված ժամկետում էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում նախարարությունը ձեռնարկում է նման

իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և կազմակերպության նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4. Եթե պայմանագրի 4.2.-րդ կետով սահմանված ժամկետում նախարարությունը չի ընդունում պայմանագրի 4.1.-ին կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված միջոցառումը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2.-րդ կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը նախարարությունը էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են հանձնման-ընդունման ակտի հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (N 4 հավելված) նախատեսված ամիսներին, ըստ պայմանագրի շրջանակներում փաստացի իրականացված միջոցառումների կատարման արդյունքի:

Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը, եթե ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և (կամ) ժամկետներ:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2. Պայմանագրի N 1 հավելվածում նշված ծրագրին չհամապատասխանող պարտավորություն իրականացնելու յուրաքանչյուր դեպքում կազմակերպությունից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 1.1.-ին կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքը հաշվարկվում է նաև պայմանագիրը սահմանված ժամկետներում կատարելու, սակայն նախարարության կողմից չընդունվելու, ինչպես նաև հաշվետվությունները պայմանագրով սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերում:

6.3. Պայմանագրով նախատեսված ծրագրի կատարման ժամկետը խախտելու դեպքում կազմակերպությունից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի 1.1.-ին կետում նախատեսված գումարի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.4. Պայմանագրի 6.2.-րդ և 6.3.-րդ կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են միջոցառման իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ: Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

6.5. Նախարարության կողմից պայմանագրի 4.1.-ին կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6. Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը: Պայմանագրի գործողությունը տարածվում է 2023 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:



Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է պայմանագիրը ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված դրամաշնորհային ծրագիրը (դրամաշնորհային ծրագիրը՝ պետք է բխի միջոցառումների նկարագրի պահանջներից և մեթոդական ցուցումներից) հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մասը (N 7 հավելված):

9.2. այն դեպքում, երբ օրենսդրությամբ նախատեսված կարգով օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մրցույթի գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս հաղթող կազմակերպություն ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում սույն կարգի պահանջներին, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո նախարարությունը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ նախարարությունը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով նախարարության կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

9.3. Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

9.4. Կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը նախարարությունը հրապարակում է իր պաշտոնական՝ <https://www.mlsa.am/?cat=142> կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

9.5. Կազմակերպությունը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը նախարարությունն այն ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.6. Պայմանագրով ստանձնած պարտավորությունը դադարում է կատարման անհնարինությամբ, եթե դա առաջացել է այնպիսի հանգամանքից, որի համար կողմերից որևէ մեկը պատասխանատու չէ՝ պայմանագրի կատարման անհնարինության մասին որոշամիտ ժամկետում գրավոր ծանուցելով մյուս կողմին: Այդ դեպքում կողմերն իրավունք չունեն միմյանցից պահանջելու պարտավորության կատարում: Սույն կետում նշված պայմանագրի կատարման անհնարինության մասին որոշամիտ ժամկետում մյուս

կողմին չձանուցելու դեպքում՝ չձանուցող Կողմը պարտավորվում է մյուս կողմին վճարել տուգանք՝ պայմանագրի 1.1.-ին կետում նախատեսված գնի 1 %-ի չափով:

9.7. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.8. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.9. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի
նախարարություն
Ք. Երևան, կառավարական տուն 3
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011030732
ՀՎՀՀ 01506515

Գլխավոր քարտուղար՝ Ս. Մուրադյան

Կ.Տ.



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Ընտանիք և համայնք» բարեգործական
հասարակական կազմակերպություն
Կոտայքի մարզ, գ. Ջրվեժ, 4-րդ փ.տուն1
Հայէկոնոմբանկ
Հ/Հ 163003027576
ՀՎՀՀ՝ 03537581

Նախագահ՝ Բնարիկ Գալստյան

Կ.Տ.



h.h. Գալստյան
Մարտինյան
ԿԿԿ

«Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում» դրամաշնորհային ծրագրի

ԱՌԱՋԱՐԿԸ

Համառոտագիր

Ծրագրի նպատակն է՝ աջակցել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված մինչև 18 տարեկան առնվազն 145 (ԿԴԻՀ) երեխաների ընտանիքում ապրելու հիմնարար իրավունքի իրացմանը, երեխայի և ընտանիքի կյանքի դժվարին իրավիճակը կանխարգելմանը կամ հաղթահարմանը և նրանց սոցիալական ներառմանը՝ Արմավիրի մարզի Մեծամոր խոշորացված համայնքում գործող երեխաների ցերեկային խնամքի կենտրոնում (այսուհետ Կենտրոն) բազմաբնույթ ծառայությունների մատուցմամբ:

Ծրագրի խնդիրները՝

աջակցել Արմավիրի մարզից շուրջօրյա խնամք տրամադրող կազմակերպությունում խնամվող առնվազն 5 երեխայի ընտանիքի հետ վերամիավորմանը՝ կազմակերպության և ընտանիքի հետ սոցիալական աշխատանքի միջոցով և կանխարգել առնվազն 10 երեխայի մուտքը հաստատություն

տրամադրել բազմաբնույթ ծառայություններ (սոցիալական, հոգեբանական, սոցիալ-վերականգնողական, արտթերապևտիկ, կրթա-մշակութային ևն) ԿԴԻՀ առնվազն 145 երեխայի և նրանց ընտանիքներին կյանքի դժվարին իրավիճակը կանխարգելելու կամ հաղթահարելու և համայնքում սոցիալական ներառման նպատակով, ինչպես նաև առնվազն 10 երեխայի մուտքը հաստատություն կանխարգելելու նպատակով

նպաստել առնվազն 145 երեխայի սոցիալական, հոգեբանական, մտավոր և բարոյական լիարժեք զարգացմանը և ներառական ակտիվացմանը կյանքի և սոցիալական հմտությունների ուսուցման միջոցով, ինչպես նաև օգտագործել մշակութային կրթությունը, որպես երեխայի լիարժեք և ներդաշնակ զարգացման կարևորագույն գործոն

արտակենտրոն ծառայությունների մատուցում Կենտրոն հաճախելու դժվարություն ունեցող առնվազն 25 ԿԴԻՀ երեխայի և նրանց ընտանիքներին

համագործակցել բոլոր շահագրգիռ կողմերի /մարզպետարան, ՄԱԾ, ՏԻՄ, ԽՀՀ, ոստիկանություն, դպրոցներ, համաքուժարան ևն/ հետ, կազմակերպել առնվազն 6 կլոր սեղան քննարկում՝ ներգրավելով նրանց ներուժը երեխաների և ընտանիքների հիմնախնդիրների լուծման և սոցիալական միջավայրում նրանց ներառումն ապահովելու համար:

Ծրագրի հիմնական գործողությունների համառոտ նկարագրություն՝

համագործակցել երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող շուրջօրյա հաստատությունների հետ Արմավիրի մարզից խնամվող առնվազն 5 երեխայի ընտանիքների հետ վերամիավորման նպատակով, ինչպես նաև սոցիալական և հոգեբանական աշխատանք այդ ընտանիքների հետ երեխաների խնամքը և դաստիարակությունը ընտանիքում իրականացնելու համար նպաստավոր պայմանների ստեղծման նպատակով:

շահառու 145 ԿԴԻՀ երեխաների և նրանց ընտանիքներին գնահատված սոցիալական կարիքների հիման վրա մատուցել համարժեք բազմաբնույթ ծառայություններ (սոցիալական, հոգեբանական, սոցիալ-վերականգնողական, արտթերապևտիկ, կրթա-մշակութային ևն). կյանքի դժվարին իրավիճակը կանխարգելելու կամ հաղթահարելու և համայնքում սոցիալական ներառման նպատակով, ինչպես նաև առնվազն 10 երեխայի մուտքը հաստատություն կանխարգելելու նպատակով

կազմակերպել «Կյանքի և սոցիալական հմտությունների ուսուցում» առնվազն 40 դասընթաց, «Անձնային աճ և հոգեկրթություն» առնվազն 30 դասընթաց, «Ծնողավարման և ֆինանսական միջոցների տնօրինման հմտություններ» առնվազն-30 դասընթաց շահառու երեխաների և նրանց ծնողների համար իրենց կյանքն ինքնուրույն կառուցելու և ծագած խնդիրները լուծելու հմտությունների և ունակությունների զարգացման նպատակով

սոցիալ-վերականգնողական ծառայությունների տրամադրում վարքային խնդիրներ ունեցող, կրթությունից դուրս մնացած ինչպես նաև ոստիկանության ուշադրության կենտրոնում հայտնված առնվազն 30 երեխայի

ըստ անհրաժեշտության արտակենտրոն ծառայություններ մատուցել Կենտրոն հաճախելու դժվարություն ունեցող առնվազն 25 ԿԴԻՀ երեխայի և նրանց ընտանիքներին

շահառու երեխաների ներդաշնակ զարգացման, վարքային խնդիրների կարգավորման (ճշգրտման) էմոցիոնալ և հոգեբանական խնդիրների հաղթահարման նպատակով կազմակերպել մշակութային և գեղագիտական դաստիարակությամբ առնվազն 4 խմբակ՝ երգ ու պարի, նկարչության, կավագործության և տիկնիկային թատրոնի, ինչպես նաև ուսուցողական էքսկուրսիաներ պատմամշակութային վայրեր և թանգարաններ:

Երեխաների սոցիալական մեկուսացումը կանխարգելելու և սոցիալական միջավայրում նրանց ներառումն ապահովելու համար սերտ համագործակցել բոլոր շահագրգիռ կողմերի, մարզային և համայնքային կառույցների հետ /մարզպետարան, ՄԱԾ, ՏԻՄ, ԽՀՀ, ոստիկանություն, դպրոցներ, համաքուժարան ևն/, կազմակերպել առնվազն 6 կլոր-սեղան քննարկումներ ներգրավելով նրանց ներուժը երեխաների և ընտանիքների հիմնախնդիրների լուծմանը:

Երեխաների կենտրոնում գտնվելու ընթացքում նրանց տարամադրել սնունդ:

Ծրագրի նկարագրություն

Հիմնախնդրի և կարիքի հիմնավորում

Ըստ սույն թվականի նոյեմբերի 30-ին վիճակագրական կոմիտեի հրապարակած՝ «Աղքատության պատկերը Հայաստանում 2010-2021թթ» զեկույցի 2021թ-ին ՀՀ-ում աղքատության մակարդակը գնահատվել է 26,5%, ընդ որում Արմավիրի մարզում ծայրահեղ աղքատությունը կազմում է 4,0% իսկ աղքատությունը 37,9% (աղբյուր՝ ՏՏԿԱՀ 2020-2021թթ.):

Ըստ նույն զեկույցի Հայաստանում երեխաների գրեթե մեկ հինգերորդն ապրում է բազմաչափ աղքատության մեջ, ընդ որում աղքատությունն արտահայտվում է նաև ոչ նյութական բաղադրիչներով՝ ցածր կրթամակարդակ, վատ առողջություն, սոցիալական անտեսվածությունը կամ մեկուսացում, իրավունքների իրացման անկարողություն ևն: Այս ցուցանիշերը վակայում են, որ բնակչության մեծ մասը շարունակում է աղքատության տեսանկյունից խոցելի մնալ, քանի որ անբավարար հնարավորությունները սահմանափակում են տևական աղքատությունը հաղթահարելու նրանց հնարավորություններն ու կարողությունները:

Մեծամոր համայնքում առկա է գործազրկություն, տղամարդկանց զգալի մասը լքելով ընտանիքը մեկնում է արտագնա աշխատանքի, ինչի արդյունքում մեծ թիվ է կազմում կազմալուծված և հիմնականում կանանց կողմից գլխավորած աղքատ ընտանիքների թիվը: Այս ընտանիքները դժվարանում են լիարժեք իրականացնել երեխայի խնամքն ու դաստիարակությունը և աղքատության մեջ երկարատև ապրելու հետևանքով ձևավորվում է այսպես կոչված «ձեռքբերովի անօգնականության համախտանիշ և աղքատության մշակույթ»: Այսպիսի ընտանիքներում մեծացող երեխաները ենթարկվում են բազմաթիվ ռիսկերի և գտնվում են մարգինալացման վտանգի ներքո:

Կանանցից շատերը մասանակցում են սեզոնային գյուղատնտեսական երակարաժամյա օրավարձու աշխատանքների, արդյունքում երեխաները դպրոցի դասերից հետո և հատկապես ամառային արձակուրդներին մնում են առանց ծնողական հսկողության և խնամքի: Արդյունքում երեխան ազատ ժամանակը մեծ մասամբ անցկացնելով փողոցում, սկսում է յուրացնել փողոցային մշակույթը:

Աղքատությունը բացասաբար է անդրադառնում նաև երեխաների լիարժեք մտավոր, սոցիալական, հոգեբանական, բարոյական զարգացման վրա, ինչպես նաև մշակութային կրթություն և գեղագիտական դաստիարակություն ստանալու մատչելիության, ազատ ժամանցն ու հանգիստը կազմակերպելու վրա:

Առաջարկվող ծրագիրը նպատակաուղղված է ԿԴԻՀ երեխաների և նրանց ընտանիքներին բազմաբնույթ ծառայությունների տրամադրման միջոցով ապահովել երեխաների ընտանիքում ապրելու իրավունքի իրացումը, ինչպես նաև նրանց լիարժեք զարգացմանը և սոցիալական ներառմանը:

Ծրագրի անվանում	Նպատակը	Դրամաշնորհատու կազմակերպություն	Բյուջե
2020			
«Ընտանիք և համայնք»	«Աջակցություն Արմավիրի մարզի Արմավիր և Մեծամոր, Տավուշի մարզի Իջևան և Նոյեմբերյան, Շիրակի մարզի Արթիկ համայնքների խոցելի երեխաներին և ընտանիքների կարողությունների զարգացմանը»	Թուֆենկյան ԲՀ	56 285 000
Մշակույթը որպես սոցիալական փոփոխությունների կարևոր գործոն	Արմավիրի մարզի Արմավիր և Մեծամոր, Տավուշի մարզի Իջևան և Նոյեմբերյան համայնքներում ԿԴԻՀ երեխաների ստեղծագործական ներուժի զարգացում	ԱՄՔՈՐ Հայաստան	10 000 000
«Մեծամորի երեխաների ցերեկային խնամքի կենտրոն»	Մեծամոր համայնքի ԿԴԻՀ 100 երեխայի ցերեկային խնամքի ապահովում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	8 500 000
«Արթիկի» երեխաների ցերեկային խնամքի կենտրոն»	Արթիկ համայնքի 100 երեխայի ցերեկային խնամքի ապահովում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	8 885 400
ԸՆԴԱՄԵՆԸ 2020			83 670 400
2021			
«Ընտանիք և համայնք»	«Աջակցություն Արմավիրի մարզի Արմավիր և Մեծամոր, Տավուշի մարզի Իջևան և Նոյեմբերյան, Շիրակի մարզի Արթիկ համայնքների խոցելի երեխաներին և ընտանիքների կարողությունների զարգացմանը»	Թուֆենկյան ԲՀ	58 800 000
«Մեծամորի երեխաների ցերեկային խնամքի կենտրոն»	Մեծամոր համայնքի ԿԴԻՀ 121 երեխայի ցերեկային խնամքի ապահովում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	9 855 800
«Արթիկի» երեխաների ցերեկային խնամքի կենտրոն»	Արթիկ համայնքի 122 երեխայի ցերեկային խնամքի ապահովում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	9 937 300
Ամուր տեղական գործընկերություն և կարող ԲՀ-ներ ի նպաստ Հայաստանում ներառական	Պայքարել աղքատության և անհավասարության դեմ և նպաստել սոցիալական փոփոխություններին և	Եվրամիություն և Հիլֆսվերկ Ինթերնեյշնլ EU and Hilfswerk International	16 773 000

սոցիալական պաշտպանության և հաշվետու համայնքների	ներառական ու կայուն զարգացմանը Հայաստանում (մասնավորապես Արմավիրի, Տավուշի մարզերում)	(HWI)	
ԸՆԴԱՄԵՆԸ 2021			95 366 100
2022			
«Ընտանիք և համայնք»	«Աջակցություն Արմավիրի մարզի Արմավիր և Մեծամոր, Տավուշի մարզի Իջևան և Նոյեմբերյան, Շիրակի մարզի Արթիկ համայնքների խոցելի երեխաներին և ընտանիքների կարողությունների զարգացմանը»	Թուֆենկյան ԲՀ	75 450 000
«Մեծամորի երեխաների ցերեկային խնամքի կենտրոն»	Մեծամոր համայնքի ԿԴԻՀ 121 երեխայի ցերեկային խնամքի ապահովում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	5 694 072
«Արթիկի» երեխաների ցերեկային խնամքի կենտրոն»	Արթիկ համայնքի 122 երեխայի ցերեկային խնամքի ապահովում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	5 694 072
Ամուր տեղական գործընկերություն և կարող ՔՀԿ-ներ ի նպաստ Հայաստանում ներառական սոցիալական պաշտպանության և հաշվետու համայնքների	Պայքարել աղքատության և անհավասարության դեմ և նպաստել սոցիալական փոփոխություններին և ներառական ու կայուն զարգացմանը Հայաստանում (մասնավորապես Արմավիրի, Տավուշի մարզերում)	Եվրամիություն և Հիլֆսվերկ Ինթերնեյշնլ EU and Hilfswerk International (HWI)	16 773 000
«2020թ. Արցախյան պատերազմից տուժած ընտանիքներին և երեխաներին սոցիալ- հոգեբանական ծառայությունների հասանելիության ապահովում»	Բազմաբնույթ ծառայությունների մատուցում 2020թ. Արցախյան պատերազմից տուժած և տեղահանված ընտանիքներին և երեխաներին, Մեծամոր, Արմավիր, Արթիկ, Իջևան և Նոյեմբերյան համայնքներում	Հովնանյան հիմնադրամ	9 057 000
ԸՆԴԱՄԵՆԸ 2022			112 668 144

Ծրագրի նպատակը, խնդիրներն ու ակնկալվող արդյունքները

Ծրագրի նպատակն է՝ աջակցել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված մինչև 18 տարեկան առնվազն 145 (ԿԴԻՀ) երեխաների ընտանիքում ապրելու հիմնարար իրավունքի իրացմանը, երեխայի և

ընտանիքի կյանքի դժվարին իրավիճակը կանխարգելմանը կամ հաղթահարմանը և նրանց սոցիալական ներառմանը՝ Արմավիրի մարզի Մեծամոր խոշորացված համայնքում գործող երեխաների ցերեկային խնամքի կենտրոնում (այսուհետ Կենտրոն) բազմաբնույթ ծառայությունների մատուցմամբ:

Ծրագրի խնդիրները՝

աջակցել Արմավիրի մարզից շուրջօրյա խնամք տրամադրող կազմակերպությունում խնամվող առնվազն 5 երեխայի ընտանիքի հետ վերամիավորմանը կազմակերպության և ընտանիքի հետ սոցիալական աշխատանքի միջոցով և առնվազն 10 երեխայի մուտք հաստատություն կանխարգելմանը,

տրամադրել բազմաբնույթ ծառայություններ (սոցիալական, հոգեբանական, սոցիալ-վերականգնողական, արտթերապևտիկ, կրթա-մշակութային ևն) ԿԴԻՀ առնվազն 145 երեխայի և նրանց ընտանիքներին կյանքի դժվարին իրավիճակը կանխարգելելու կամ հաղթահարելու և համայնքում սոցիալական ներառման նպատակով,

նպաստել առնվազն 145 երեխայի սոցիալական, հոգեբանական, մտավոր և բարոյական լիարժեք զարգացմանը և ներառական ակտիվացմանը կյանքի և սոցիալական հմտությունների ուսուցման միջոցով, ինչպես նաև օգտագործել մշակութային կրթությունը, որպես երեխայի լիարժեք և ներդաշնակ զարգացման կարևորագույն գործոն

արտակենտրոն ծառայությունների մատուցում Կենտրոն հաճախելու դժվարություն ունեցող առնվազն 25 ԿԴԻՀ երեխայի և նրանց ընտանիքներին

համագործակցել բոլոր շահագրգիռ կողմերի /մարզպետարան, ՄԱԾ, ՏԻՄ, ԽՀՀ, ոստիկանություն, դպրոցներ, համաբուժարան ևն/ հետ, կազմակերպել առնվազն 6 կյոթ սեղան քննարկումներ՝ ներգրավելով նրանց ներուժը երեխաների և ընտանիքների հիմնախնդիրների լուծման և սոցիալական միջավայրում նրանց ներառումն ապահովելու համար,

Ակնկալվող արդյունքներ

Արմավիրի մարզից շուրջօրյա խնամք տրամադրող կազմակերպությունում խնամվող առնվազն 5 երեխա վերամիավորվել է ընտանիքի հետ, կանխարգելվել է առնվազն 10 երեխայի մուտքը հաստատություն

ամսական 145 ԿԴԻՀ երեխայի (այդ թվում նաև շուրջօրյա հաստատություններում խնամավոր,) և նրանց ընտանիքների գնահատված կարիքների հիման վրա մատուցված սոցիալական, հոգեբանական, կրթական և մշակութային որակյալ ծառայություններ

Ծառայություններ ստացած ԿԴԻՀ երեխաների և նրանց ընտանիքների առնվազն 90 %-ի մոտ արձանագրվել են դրական փոփոխություններ,

շահառուների առնվազն 90%-ը բավարարված է մատուցված ծառայություններից,

երեխաների ցերեկային խնամքի ապահովման արդյունքում ծնողների առնվազն 70%-ը կարողանում է աշխատել և եկամուտներ ունենալ, ինչը նպաստում է աղքատության նվազմանը

«Ծնողավարման և ֆինանսական միջոցների տնօրինման հմտություններ» և «Անձնային աճ և հոգեկրթություն» մասնակից ծնողների առնվազն 90%-ը ձեռք է բերել դրական ծնողավարման գիտելիքներ, բարելավվել են ծնող-երեխա փոխհարաբերությունները, կանխարգելվել է ընտանիքում երեխաների հանդեպ բռնությունների կիրառումը

շահառու երեխաների 90%-ը ձեռք է բերել նոր գիտելիքներ և հմտություններ, արդյունքում բարձրացել է երեխաների ինքնագնահատականը, վստահությունը սեփական ուժերին, պատասխանատվության զգացումը, երեխաները հաղթահարել են «աղքատության մշակույթի» բարդույթները

մշակութային և գեղագիտական ուսուցման շնորհիվ զարգացել է շահառու երեխաների 90%-ի ստեղծագործական ներուժը, երեխաներն ունեն պատրաստի մշակութային արտադրանքներ (կավագործության նմուշներ, նկարներ, համերգային առնվազն 2 ծրագիր, տիկնիկային թատրոնի առնվազն մեկ պատրաստի ներկայացում),

համայնքում կազմակերպվել է առնվազն 8 մշակութային միջոցառում շահառու երեխաների անմիջական մասնակցությամբ, այդ թվում տիկնիկային թատրոնի բարեգործական ներկայացումներ, որոնց մասնակցել են համայնքի բնակիչներ, ներկայացվել են երեխաների մշակութային արտադրանքները, ինչը նպաստել է երեխաների լիարժեք ներառմանը համայնքի մշակութային կյանքին,

վարքային խնդիրներ և ոստիկանության տեսադաշտում հայտնված առնվազն 30 երեխայի հետ առանձնահատուկ վերականգնողական ծառայությունների արդյունքում բարելավվել է վարքային խնդիր ունեցող երեխաների առնվազն 90 %-ի վարքը, կանխարգելվել է նրանց կողմից «փողոցային մշակույթի» յուրացումը, և ապահովվել նրանց ներառումը համայնքային կյանքին

արտակենտրոն ծառայություններ են տրամադրվել առնվազն 25 ԿԴԻՀ երեխաներին և ընտանիքներին, ապահովվել է ծառայությունների հասանելիություն և մատչելիություն շահառուների ավելի լայն շրջանակներին

գործում է համագործակցային ցանց բոլոր շահագրգիռ կողմերի, մարզային և համայնքային կառույցների հետ /մարզպետարան, ՄԱԾ, ՏԻՄ, ԽՀՀ, ոստիկանություն, դպրոցներ, համաբուժարան ևն/, կազմակերպել առնվազն 6 կյոթ-սեղան քննարկումներ ներգրավելով նրանց ներուժը երեխաների և ընտանիքների հիմնախնդիրների լուծմանը:

Ծրագրի արդյունավետությունը գնահատելու համար

պարբերաբար կվերահսկվի ծրագրի ընթացքը և նախանշված նպատակներին համապատասխան փաստացի կատարողականությունը:

կվերահսկվի յուրաքանչյուր երեխայի ակտիվ մասնակցությունը ծրագրին, պարբերաբար կգնահատվի նրանցից յուրաքանչյուրի անհատական առաջընթացը:

կկատարվեն վերլուծություններ և արդյունքների գնահատում մոնիթորինգային դիտարկումների, հարցազրույցների, անանուն հարցաթերթիկների միջոցով

Գործողություններ

Որոնք են այն կոնկրետ գործողությունները և մեթոդները ծրագրի նպատակի իրագործմանն ուղղված յուրաքանչյուր խնդրի համար: Ներկայացնել ամսական կտրվածքով աշխատանքային պլան՝ համաձայն ստորև ներկայացված ձևաչափի .

համագործակցել երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող շուրջօրյա հաստատությունների հետ Արմավիրի մարզից խնամվող առնվազն 5 երեխայի ընտանիքների հետ վերամիավորման նպատակով, ինչպես նաև սոցիալական և հոգեբանական աշխատանք այդ ընտանիքների հետ երեխաների խնամքը և դաստիարակությունը ընտանիքում իրականացնելու համար նպաստավոր պայմանների ստեղծման նպատակով:

ԿԴԻՀ երեխաների հայտնաբերում համագործակցելով ՄՄԾ, Արմավիրի մարզպետարանի ԵԿԸ իրավունքների պաշտպանության բաժնի, ԽՀՄ, ՏԻՄ սոցիալական բաժնի, կրթական հաստատությունների, ոստիկանության և այլ շահագրգիռ կառույցների հետ

տունայցերի միջոցով ԿԴԻՀ երեխաների ընտանիքների ուսումնասիրություն, հիմնախնդիրների վերհանում

